

Գ. Ս. ԳԱԼՔՅԱՆ

Գ. Ն. ՊՐՅԱՆԻՇՆԻԿՈՎԸ՝ ԱԿՐՈՔԻՄԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ
ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԳ*

Սովետական Միության Մինիստրների սովետը 1965 թ. մայիսի 21-ին որոշեց առանձնահատուկ նշել Գ. Ն. Պրյանիշնիկովի 100-ամյա հոբելյանը: Համարյա մեկ ամիս է ինչ Սովետական Միության ագրոքիմիկոսներն ու բույսերի ֆիզիոլոգները, գյուղատնտեսներն և ինժեներ-տեխնոլոգները, ուսանողության ու մտավորականության լայն խավեր, ինչպես և արտասահմանյան շատ գիտական օջախներ նշում են ագրոքիմիական գիտության բազմակողմանի, կարևորում, ողջ աշխարհում համաժողովրդական ճանաչում ստացած գիտական, խոշորագույն հետազոտությունների հեղինակ և գյուղատնտեսական գիտական կադրերի բազմաթիվ սերունդների ուսուցիչ և հայր, սոցիալիստական աշխատանքի հերոս, ակադեմիկոս Դմիտրի Նիկոլաևիչ Պրյանիշնիկովի ծննդյան 100-ամյակը:

Այդ մեծ ճանաչումը գիտնականի մահից հետո, նրա ուսմունքի հաստատ ու անհակաձուռի հաղթանակը պայմանավորված են նրա ստեղծած գիտական և դիտաարտադրական արժեքների ճշտությամբ, վեհությամբ և մարդկային հասարակության զարգացման համար օգտակարությամբ ու անհրաժեշտությամբ: «Գործն է անմահ, լավ իմացե՛ք...» ասել է հայ բանաստեղծը լավ մարդկանց գնահատելու համար: Ագրոքիմիական գիտության խոշորագույն սյուներից մեկի՝ Գ. Ն. Պրյանիշնիկովի գործն անմահ է և համայնարժեք:

Սակայն նախքան Գ. Ն. Պրյանիշնիկովի գիտական գործունեության անցնելը, նշենք մի քանի դժո՛ղ միայն այդ արժանավոր ու մեծ մարդու կյանքի ուղին:

Դմիտրի Նիկոլաևիչ Պրյանիշնիկովը ծնվել է 1865 թ. հոկտեմբերի 25-ին (7/11) Մոնղոլիայի սահմանի մոտ Կյախտա քաղաքում (ժամանակակից Խորյաթական Ավտոնոմ Սովետական Սոցիալիստական Հանրապետություն)՝ հաշվապահ՝ ծառայողի ընտանիքում: Դմիտրին չգիտեր իր հորը, որը մեռել էր, երբ տղան դեռ 2 և կես տարեկան էր: Նրա առողջ և ճշմարիտ դաստիարակության համար մեծ դեր է կատարել նրա մայրը՝ Ալեքսանդրա Ֆեոդորովնա Պրյանիշնիկովան, որը Նիկոլայ առաջինի ժամանակ պատվված և Միքիլ բշված զինվորի աղջիկ էր: Կյախտայում և նրա շրջակա գյուղերում վերարևակվել էին և շատ ղեկարգիտներ: Ցարական ռեժիմի կենտրոններից հեռու, այստեղ համեմատաբար մաքուր էր մթնոլորտը և հագեցված ազատամիտ գաղափարներով: Այդ ամենն ըստ երևույթին ազդել էր արտաքսյալ զինվորի և նրա դստեր՝ Դմիտրիի մոր հայացքների վրա, որը և հետագայում բազմաթիվ դեպքերում արտահայտվեց իրեն՝ Դմիտրի Նիկոլաևիչի վարքագծով՝ ուսանողական հեղափոխական շարժումների ժամանակ:

* 1965 թ. դեկտեմբերի 2-ին Հայկ. ՍՍՐ գիտությունների ակադեմիայի, գյուղատնտեսության մինիստրության և Սրբանի պետական համալսարանի Գ. Ն. Պրյանիշնիկովի ծննդյան 100-ամյակին նվիրված միացյալ ժողովում կարդացված զեկուցումից:

Ամուսնու մահից հետո Գմիտրի Նիկողանիչի մայրը տեղափոխվում է Իրկուտսկ՝ ամուսնու մոր մոտ։ Նրանց տունը սիբիրյան Անգարա գետի ափին էր։ Այդ շրջանի մասին Գ. Ն. Պրյանիշնիկովը հիշում էր՝ (այստեղ և հետագա շարադրության մեջ կարևոր մեջբերումները բերվում են ուսանելի)։

«Мы росли привольно, не зная никаких наказаний, никакой суровости, но в то же время не было той мягкотелой доброты, которая граничит с беспринципностью; мать нас воспитывала примером, исправляла любовь, внушала уважение к труду и трудящимся».

Այս վերջին բառերը շատ բնորոշիչ են Գ. Ն. Պրյանիշնիկովի հետագա աճողը կյանքի համար։ 1883-ին, ոսկե մեդալով Իրկուտսկի գիմնազիոնն ավարտելով, նա ընդունվեց Մոսկվայի համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետի բնական գիտությունների բաժանմունքը։ Ուսանող Պրյանիշնիկովի հետաքրքրության ասպարեզը շատ լայն էր. որակյալ ուսանելով ֆիզիկա, մաթեմատիկա, քիմիա, կենսաբանություն և այլն, նա հաճախ տարվում էր նաև քաղաքական ու տնտեսագիտական գրականությամբ։

Համալսարանում Պրյանիշնիկովը աչքի ընկավ հատկապես քիմիայի բնագավառում և առաջարկություն ստացավ գիտական աշխատանքի անցնելու քիմիայի գծով։ Սակայն նա չուզեց սահմանափակել իրեն նեղ գիտական աշխատանքով, այլ փնտրում էր ուղիներ առավել օգտակար լինելու ժողովրդին, որի ծանր կեցությունը լավ ծանոթ էր նրան։ 1887 թ. Մոսկվայի համալսարանի գիտության թեկնածուի աստիճանով Գ. Ն. Պրյանիշնիկովն ընդունվում է Պետրոսյան գյուղատնտեսական ակադեմիան։ Այստեղ նա ամենալուրջ կերպով սկսում է ուսանել՝ տարվելով բույսերի ֆիզիոլոգիայով, ագրոքիմիայով, բուսաբուծությամբ, գյուղատնտեսական տնտեսագիտությամբ և վիճակագրությամբ։

Կ. Ա. Տիմիրյազևի, Ի. Ա. Ստերետի և ագրոքիմիկոս Գ. Գ. Գուստաֆսոնի խորհրդով Պրյանիշնիկովն ընտրվում է հատուկ թոշակառու պրոֆեսորական կոչման պատրաստվելու համար։ Նա կատարում է բազմաթիվ դաշտային փորձեր և լաբորատորական հետազոտություններ։ 1892 թ. նա պործնովում է երկու տարով Ցյուրիխ, որտեղ հռչակավոր քիմիկոս է. Շուլցեյի լաբորատորիայում սկսում է իր աշխարհահռչակ հետազոտությունները բույսերի մեջ սպիտակուցային նյութերի փոխակերպության բնույթի և նշանակության վերաբերյալ։ Եվ մինչև կյանքի վերջին օրերը Գ. Ն. Պրյանիշնիկովը շղաղարեց հետազոտել բույսերի սննդառության, նրանց ֆիզիոլոգիայի և բիոքիմիզմի, ագրոքիմիայի և պարարտացման, ինչպես նաև քիմիացման տնտեսագիտական բազմաթիվ ու բազմապիսի հարցերի թե տեսական և թե գործնական կողմերը։ Անհնար է մի զննույցի մեջ ընդգրկել մեծ գիտնականի նույնիսկ կենսագրությունը՝ այն չափազանց հարուստ է, հետաքրքրական և ուսանելի։ Կահմանափակվեմ մի մեջբերումով, որը քաղված է իրեն Գմիտրի Նիկողանիչի կուլյից։ 1945 թ. նոյեմբերի 17-ին Մոսկվայում, գիտնականների տանը, իր 80-ամյա հոբելյանին և հայրենական պատերազմի 1-ին աստիճանի չքանչանով պարգևատրվելու առիթով, բազմաթիվ ողջունաձևերին պատասխանելով նա ասել է.

«В своей работе больше всего внимания я уделил исследованиям в области агрономической химии и физиологии растений. Почему именно эта область знания привлекла меня? По окончании естественного отде-

ления физико-математического факультета Московского Университета и, под влиянием общественных настроений того времени, считал необходимым специализироваться в области, в которой моя работа была бы наиболее полезна для народа. Я решил избрать агрономию и поступил на третий курс Петровской академии. Здесь, под влиянием Тимирязева, которого я знал еще по университету, я начал специализироваться и работать в области агрономической химии и физиологии растений.

Агрономическая химия привлекла мое внимание своей связью с практическими задачами повышения урожаев. Думаю, что моя многолетняя работа показала правильность избранного пути и что исследования, проведенные мною и моими сотрудниками, имеют существенное значение для земледелия СССР.

Большое удовлетворение дает сознание, что результаты этих работ, найдя свое приложение после Великой Октябрьской соц. революции, пошли на пользу не только нашему земледелию, но и способствовали развитию химической промышленности и тем самым укреплению обороноспособности Советского Союза. Настоящий год является годом победы и мне приятно сознавать, что в этой победе есть капля и моего труда...

Принимая сегодня Ваши приветствия и поздравления, я хочу их отнести не столько к себе лично, сколько к тому делу, которому я посвятил свою жизнь.

Теперь, когда наша страна... победоносно завершила величайшую из войн и мы вступили в пору мирного развития, мы будем иметь еще более широкие перспективы и возможности для химизации земледелия, для развития агрономической химии и других наук». (Избр. соч. Сельхозгиз, т. 1, стр. 26. В статье А. В. Петербургского).

Ստացված ողջուններից բավական է նշել դիտությունների ակադեմիայի այն ժամանակվա պրեզիդենտ Ս. Բ. Վավիլովի, որը նախագահում էր, նամակի խոսքերը. «Շատ քիչը կարող են հետադարձ հայացք ձգել իրենց անցյալին այնպիսի բավարարվածությամբ և հպարտությամբ՝ ինչպես դուք»:

Պրյանիշնիկովի հմայիչ կերպարը շատ հաջող է նկարագրել ակադեմիկոս Պ. Մ. Ժուկովսկին, հետևյալ բնորոշումներով. «Ուժ, իմաստություն, մեծ մասշտաբներ, հումոր, կենսական կոճղություն-պնդություն, սեր դեպի բնությանը, տնային կենսակերպության հասարակ լինելը...» (Նույն տեղ)։

Պրյանիշնիկովը 550-ից ավելի աշխատությունների հեղինակ է։ Դեռ 1926 թ. ստացել էր լուսավորության աշխատողների Վ. Ի. Լենինի անվան մրցանակ, իսկ 1941 թ. նա պետական մրցանակի լատերես էր. 1945 թ. ստացավ աշխատանքի հերոսի կոչում և շքանշաններ։ Նա մի շարք ակադեմիաների անդամ էր։

Գ. Ն. Պրյանիշնիկովը Սովետական Միության ողջ գյուղատնտեսության հիմնաքանակ գաղափարի հեղինակն է։ Ժողովրդական տնտեսության հիմնփյկացիա, հիմնաքանակ տերմինն էլ առաջինը նա է մտքերի զորածության մեջ՝ իր մի շարք բազմակողմանիորեն մշակված առաջարկություններով, որոնք կազմել է Պետպլանի և Համամոլտեսխորհրդի համար։

Հեշտ չի եղել Պրյանիշնիկովի պայքարն այդ գաղափարի իրականացման գործում, իսկ լիակատար հաղթանակը տեղի ունեցավ դիտանականի մահից հետո:

Այդ գործում ամենից շատ խանգարել է նույն Պետրոսյան գյուղատնտեսական ակադեմիայի նույն շրջանի սան և ապա պրոֆեսոր, հռչակավոր, գանազան արժանիքներ ունեցող, բայց գիտական մի շարք մոլորություններով տառապող Վ. Ռ. Վիլյամսը:

1907 թ. ղեակցիայի տարիներին, Դ. Ն. Պրյանիշնիկովը հրաժարվեց Մոսկովյան գյուղատնտեսական ինստիտուտի իրեն առաջարկվող դիրեկտորի պաշտոնից: Այդ պաշտոնին ընտրվեց Վ. Ռ. Վիլյամսը: Նա լավ ընդունեց սովետական կարգերը և մեծ ու նվիրված աշխատանք կատարեց բանֆակի ստեղծման ու լայն աշխատավորական երիտասարդներին ակադեմիա ընդունելու գործում: Ողևորված տեղի ունեցող հեռ-հեկտեմբերյան մեծ փոփոխություններով Վ. Ռ. Վիլյամսը ամեն կերպ ընդառաջում էր ուսանողներին, շատ թեթև վացնում քննությունները և դարձել էր ուսանողության սիրելին ու «բանֆակի հայրը»: Դ. Ն. Պրյանիշնիկովը այլ ոճի տեր էր: Նա նույնպես հեղափոխության առաջին իսկ օրերից սկսեց համադրծակցել Պետպլանի, Ժողատխարհի և ապա ծանր արդյունաբերության մինիստրության աշխատանքին, ուժեղացրեց աշխատանքը Տիմիրյազևի անվան ակադեմիայում, սակայն ուսուցման մեջ նրա ոճը այլ էր: Նա հավաստապես պահանջելու էր ղեկի բոլոր ուսանողները և խիստ էր քննությունների ժամանակ. նա չէր սիրում ղզալի գիշումներ անել ուսանողներին ի վնաս գիտելիքների մակարդակի: Սակայն երկու ակադեմիայի պրոֆեսորների միջև տարբերությունները միայն բնավորության մեջ չէին: Աստիճանաբար զարգանալով խիստ սրվեցին նրանց միջև եղած դիտական, սկզբունքային՝ աշխարհայեցողական վեճերը: Ամենաընդհանուր բնորոշմամբ կարելի է ասել, որ Վ. Ռ. Վիլյամսը ֆանատիկ էր և սիրում էր փրկաստիճակ. Դ. Ն. Պրյանիշնիկովը քաջասու էր, անկաշառ, ուղիղ, փորձով հագեցված փաստեր հետադոտող-գաղափար (կլասիկ) գիտնական:

Լայն քիմիացման գաղափարի իրականացումը կապված էր քիմիական արդյունաբերության զարգացման հետ, որին նպաստում էր ամեն կերպ Դ. Ն. Պրյանիշնիկովը, մինչդեռ Վ. Ռ. Վիլյամսը ոչ միայն համաձայն չէր հանքային պարարտանյութերի արտադրության զարգացման ծրագրին, այլև ղեկավարելի մեղադրանքներով հարձակվում էր Դ. Ն. Պրյանիշնիկովի վրա և միտելով քիմիացման անհրաժեշտությունը, որպես համատարած և ունիվերսալ «ղեղ» առաջարկում էր երկրագործության խոտազաշտային սիստեմը:

Հենց այստեղ նշենք, որ շատ և շատ մարդիկ, տեղյակ լինելով գիտական աղբյուրներին, կարծում են թե «խոտազաշտային սիստեմը» զա խոտացանությունն է, կամ թիթեռնածաղկավոր խոտերի մշակությունը ցանքաշրջանառությունների մեջ, Բնավ երբեք այդպես չէ: Պրյանիշնիկովը ինքը և աղբորքիմիական գիտությունն ընդհանրապես միշտ գիտական, համոզիչ տվյալներով ջատագովել է աուվյաթի, երերեուկի, կորնզանի հակալական դերը մեր տնտեսության մեջ՝ հատկապես ազատի բալանսի բարելավման համար:

Վիլյամսի խոտազաշտային սիստեմի հիմքում ոչ թե թիթեռնածաղկավոր խոտերի մշակությունն է, այլ նրանք հեռ անալալմանորեն և ամենուրեք հացազգի խոտեր ցանելը՝ հողի ստրուկտուրան լավացնելու նպատակով: Պրյանիշնիկովը նշում էր, որ հողի ստրուկտուրայի կարճատև բարելավման հետ

միասին այդ դեպքում խիստ կրճատվում է ազդեցիկ կուտակումը և տնտեսությունը տուժում է: Գ. Ն. Պրյանիշնիկովը ապացուցում էր իր առաջարկները բազմաթիվ փորձերով, հատուկ հետազոտությունների արդյունքներով, ամբողջ աշխարհում կուտակված փաստերով:

1937 թ., երբ քննվում էր 1942 թ. տնտեսական ցուցանիշները և Պրյանիշնիկովի մշակած բիմիացման ծրագիրը գյուղատնտեսական գիտությունների ակադեմիայի նստաշրջանում, Վ. Ռ. Վիլյամսը դեմ ելավ այդ ծրագրին:

Վիլյամսը գտնում էր, որ Սովետական Միության ողջ հողածածկի մեջ շագանակ, ֆոսֆորը և, կալիումը չէ, միկրոտարրերը չեն, որ գտնվում են միևնույնում, այլ ջուրը. և մինչև ջրի այդ պակասը չլրացվի հանրային պարարտանյութերի ամբողջ քանակությունը պակասած կմնա որպես մեռյալ կապիտալ:

Այս անապացույց խոսքերի դեմ Գ. Ն. Պրյանիշնիկովը բերում էր Սովետական Միության 300 փորձադաշտերում և կոլտնտեսություններում կատարած հազարավոր դաշտային փորձերի արդյունքները, որոնք ապացուցում են պարարտանյութերի ակնհայտ և շատ բարձր էֆեկտիվությունը: Պրյանիշնիկովը միշտ նշում էր բարձր ազդեցիկությունների դերը, սակայն նա չէր աստվածացնում հողի ստրուկտուրան՝ անժխտելի փաստ է, որ Միջին Ասիայի ստրուկտուրա-զուրկ հողերում պարարտանյութերը ապահովեցին բամբակի՝ աշխարհում ամենաբարձր միջին բերքը:

Մեր բազմաթիվ փորձերը, որոնք հրապարակված են, անմիջևեցիկորեն ապացուցում են, որ Հայաստանում, նույնիսկ երաշտ տարիներին պարարտանյութերն են որ փրկում են բերքը՝ խառն կորստից: Պրյանիշնիկովը նշում էր, որ ստախանովականները ևս ապացույցեցին, որ առանց պարարտացման հնարավոր չէ շատ բարձր բերք ստանալ: Վիլյամսը հակաճառում էր՝ «ստախանովականներն ապացույցեցին ոչ թե ազդեցիկության հաղթանակը, այլ դիալեկտիկայի ուժը» և այլն:

Վ. Ռ. Վիլյամսը հաճախ խոսելով հանքային պարարտանյութերի արտադրության դեմ, գտնում էր, որ դա «միլիարդներ մեռցնել» կնշանակեր:

Այդ տարիներին զգալի չափով խանգարվեց ժողովրդական տնտեսության քիմիացման ընթացքը: Պրյանիշնիկովը և նրա հետևորդները ճնշվեցին, ումանք զոհվեցին, տուժեցին, կամ հետ մղվեցին ասպարեզից: Պրյանիշնիկովին հանեցին որոշ աշխատանքներից: Նրա դեմ հողվածներով հանդես եկան, իսկ նրա պատասխանների մեծ մասը չէր տպվում...

Անցան տարիներ: 1939 թ. մահացավ Վ. Ռ. Վիլյամսը, 1948 թ. ապրիլի 30-ին դադարեց բարախել նաև Գ. Ն. Պրյանիշնիկովի ազնիվ և մաքուր սիրտը: Թերթվեցին նրանց կենաց զրբի վերջին էջերը:

Փողովորդական տնտեսության քիմիացման պրյանիշնիկովյան գաղափարը հաղթանակեց: Այն պլանը, որ մշակել էր Գ. Ն. Պրյանիշնիկովը երրորդ հրնգամյակի վերջի — 1942 թ. համար (20 մլն տոնն հանքային պարարտանյութ) կատարվեց ուշ 1963 թ.: 1964 թ. արտադրվել է 26,6 մլն տոնն հանքային պարարտանյութ՝ 6,4 մլն տոնն պայմանական անդանյութերի պարունակությամբ: 1970 թվականին մեր մեծ և բազմազգ երկիրը կարտադրի 70—80 տոնն հանքային պարարտանյութեր: Սա աննախընթաց մեծություն է, որը, սակայն, դեռ լիովին չի բավարարի լայնատարած երկրի պահանջներն, այն մակարդակով, ինչ մակարդակի վրա է գտնվում հանքային պարարտանյութերի միջին կիրառումն ամեն մի հեկտարին — աշխարհի մի շարք այլ երկրներում:

Այնուամենայնիվ դա մեծ թիվ է, որ հավասարազոր է առնվազն 100-ից 200 մլն տոնն հացահատիկի լրացուցիչ բերքի և շատ այլ արժեքավոր բուսական բարիքների լրացուցիչ քանակությունների: Վիլյամսի ուսմունքը վնաս հասցրեց մեր գյուղատնտեսությանը և հետաձգեց նրա հաջողությունները: Սակայն այն բնագավառներում, ուր Վիլյամսի ուսմունքով չդեկավարվեցին, այլ գերադասեցին պրյանիշնիկովյան ուղին, ստացվեցին աննախընթաց արդյունքներ: 1963 թ. լիովին քիմիացված բամբակադրծուկությունը տվեց ամենաբարձր բերքը՝ 5,2 մլն-ից ավելի տոնն բամբակ, հեկտարից ստանալով աշխարհում ամենաբարձր միջին բերքը: Գաղտնիքը՝ բամբակի դաշտերի ամեն մի հեկտարը միջին հաշվով ստանում է մոտ մեկ տոնն ազոտանիտ և ֆոսֆորական պարարտանյութեր: 1963 թ. 30-ական թվականների հետ համեմատած, 5,5 անգամ աճեց քեյի տերևի բերքը, հասնելով 169 հազար տոննի՝ թեյի պլանտացիաները ստանում են միջին հաշվով 1,5—2 տոնն հանքային պարարտանյութ հեկտարին: Նույնը կարելի է ասել ճակնդեղի և վուշի — այսինքն տեխնիկական մշակույթների մասին:

Ուրեմն երբ մենք հնարավորություն կունենանք առատ պարարտացնել նաև մնացած մշակույթները՝ հացահատիկային և պտղա-բանջարանոցային և այլն, ինչպես և խոտհարքներն և արոտավայրերը՝ գյուղատնտեսական միջոցների առատությունը շատ մեծ չափերի կհասնի:

Ամբողջ աշխարհում շտեմնված չափերով լայնանում է պարարտանյութերի արտադրությունը և մենք իրավունք չունենք հետ մնալու: 1938 թ. համեմատությամբ մեր երկրում, ամեն մի հեկտար վարելահողին ընկնող հանքային պարարտանյութերի մեջ N, P₂O₅ և K₂O-ի ընդհանուր քանակությունն աճել է 10 անգամ՝ 1,6 կգ-ից հասնելով 16 կգ-ի: Սակայն հենց այդ ցուցանիշներով 1963 թ. մենք բռնում էինք աշխարհում 10-րդ տեղը՝ հետևյալ երկրներից հետո. Հոլանդիա (518 կգ N, P₂O₅, K₂O), ԳՖՌ (305), Ճապոնիա (270), Անգլիա (194), ԳԴՌ (160), Ֆրանսիա (122), Զեխտսլովակիա (86), Լեհաստան (67), ԱՄՆ (45) ՍՍՌՄ (16), Զինաստան (9), Հնդկաստան (2,7): Դժվար չէ նկատել, որ մեկ հեկտար վարելահողին ընկնող ազոտի, ֆոսֆորի և կալիումի քանակի փոքրությամբ աչքի են ընկնում լայնատարած երկրներն, այդ թվում նաև ԱՄՆ: Սակայն ի տարբերություն մյուս երկրների հանքային պարարտանյութերի արտադրության տեմպերն այժմ ամենաբարձրն են ԱՄՆ-ում և ՍՍՌՄ-ում: Այսպիսով, մեր երկիրը բռնել է ճիշտ և անշեղ ուղի քիմիացման բնագավառում: Պրյանիշնիկովի գաղափարներն այս բնագավառում բոլոր աղելի և խելացի մարդկանց սեփականությունը դարձան:

Այժմ խոսենք մի քանի այլ՝ առանձին խնդիրների մասին, ցույց տալու համար Պրյանիշնիկովի մոտեցումը գիտական երկրագործության կարևոր, երբեմն վեճի առարկա դարձած խնդիրներին:

Պրյանիշնիկովը ցանաշրջանառությունների մասին: Այս խնդրում ևս դաժան վեճեր կային Վիլյամսի և Պրյանիշնիկովի միջև: Վիլյամսը առաջարկում էր բոլոր ղեպերի համար երկու տիպի, այսպես կոչված, «խոտադաշտային ցանաշրջանառություն»՝ դաշտային և կերային, սակայն մի ընդհանուր սկզբունքով՝ խոտախառնուրդների օգակով: Ըստ որում, խոտախառնուրդը կազմում են անպայման բազմամյա հացազգի և քիբեռնածաղկավոր խոտեր:

Ի դեպ պետք է ասել, որ այս հարցում շատերն են սխալվում՝ առկույտի, երեքնուկի, կորնգանի սովորական խոտացանությունը համարելով խոտա-

դաշտային»։ Խոտադաշտային ցանքաշրջանառության առանձնահատկությունը բաղմամյա հացազգի խոտերի առկայությունն է խոտախառնուրդի մեջ, առանց բաղմամյա հացազգի խոտերի՝ չկա խոտադաշտային ցանքաշրջանառություն։ Առանց հացազգի խոտերի փլվում է այն ողջ ղեղեցիկ կառուցվածքը, որ մաս-հայեցողականորեն, առանց լուրջ փորձարկման, մշակել էր Վիլյամսը։ Հենց որ հացազգի խոտերը հանկ է խոտախառնուրդից՝ դուր փաստորեն հրաժարվում եմ Վիլյամսի ցանքաշրջանառությունից, ժխտում եմ այն և անցնում պտղափոխության սկզբունքին, բանի որ բաղմամյա հացազգի խոտերը Վիլյամսի ուսմունքի անկյունաքարն են։ Նրա ցանքաշրջանառությունների նպատակն է՝ «վերականգնել» հողի բերրիությունը, հարստացնել այն «դորձունյա փտահողով» (հումուսով), բարելավել ստրուկտուրան՝ միշտ ցրտահերկի (ծխակով գարնանավարը) և օրգանական պարարտանյութերի միջոցով։

Գ. Ն. Պրյանիշնիկովը ղեմ էր աչդ ցանքաշրջանառությունների ամենուրեք տարածմանը, ժխտում էր նրանց ունիվերսալ դերը, գտնում էր, որ շատ քիչ պարագաներում կարող է օգտակար լինել այդ ցանքաշրջանառությունը, բանի որ նրա գիտական հիմքը խախտու է։ Նա հաշվված է հողի ստրուկտուրան բարելավելու և խոտի բերքն ավելացնելու վրա, սակայն նրա սկզբնահաշիվների մեջ աշխարհը են առված հողի և բույսի միջև նյութերի փոխանակության կանոնավորման, ղեկավարման այն կարևորագույն միջոցները, որոնք ապահովում են բուսական նյութի մաքսիմալ բերք և, միաժամանակ, հողի արգավանդության ոչ միայն «վերականգնում» այլև աստիճանական բարձրացում բնական մակարդակից ավելի։ Այդ տեսակետից ավելի խելացի են մշակված պտղափոխական ցանքաշրջանառությունները (плодосменные), որոնց հիմքում ընկած է հողից նյութերի ծախսի հաշվառումը և բույսերի այնպիսի հաջորդականություն, որն ապահովում է այս կամ այն մշակույթի միջոցով ծածկել, կամ ավելի բան փոխհատուցել, նախորդի սննդանյութերի ծախսը։ Մա հաջողվում է թիթևոնածաղկավոր խոտերի (առվուշտ, կորնգան, երերնուկ) և շարահերկ մշակույթների օգնությամբ։

Գ. Ն. Պրյանիշնիկովը, հիմնականում ընդունելով այս վերջին ցանքաշրջանառությունները, գտնում էր, որ հողի արգավանդության և բերքի աստիճանական բարձրացման համար անհրաժեշտ է լայն կիրառել հանքային պարարտանյութեր ոչ միայն տեխնիկական ու հացահատիկային մշակույթների, այլև խոտադաշտի համար. նա գտնում էր, որ հանքային պարարտանյութերի արդյունավետությունը կարտահայտվի նաև տնտեսության մեջ դոմադրի ելի ավելացմամբ, որը նույնպես անկորուստ դաշտ պետք է մտցնել։

Ընդհանուր առմամբ Գ. Ն. Պրյանիշնիկովը ղեմ էր շարունակ, կաշկանդող ցուցումներին, գտնում էր, որ ցանքաշրջանառությունները պետք է լինեն ձկուն, ոչ քարացած, բարձրարդյունավետ տվյալ պայմաններում, և փոփոխման ենթակա ըստ տնտեսության կարիքի, և որ ամենակարևորն է, ապահովված հանքային և օրգանական տուառ պարարտացմամբ։ Այսպիսով, կրեմն արտահայտվող այն կարծիքը, թե Պրյանիշնիկովը ընդունում էր միայն հանքային պարարտանյութերը և ղեմ էր ցանքաշրջանառություններին՝ մոլորության կամ տգիտության արդյունք է։

Ժիշտ է միայն այն, որ Պրյանիշնիկովը ղեմ էր միանգամ ընդմիշտ հաստատված ցանքաշրջանառության գերին դառնալուն։

Պրյանիշնիկովը տեղական և օրգանական պարարտանյութերի մասին:

Մի ժամանակ զրպարտչական, անազնիվ մեղադրանք էր կապվում Պրյանիշնիկովին, իբր նա դեմ էր գոմադրի և տեղական այլ պարարտանյութերին: Դրանք Վիլյամսի հետեորդներն էին, որոնք անհիմն կերպով օրգանական պարարտանյութերի և հատկապես գոմադրի կիրառումը հակադրում էին հանրային պարարտացմանը: Այդ դիմակի տակ կրկին բաճկված էր հանգային պարարտանյութերի դեմի ժխտումը, կամ քեռագնահատումը: Ուշադրության կենտրոնը առանց մեծ ջանքերի առաջացող գոմադրի վրա տեղափոխելով, քիմիացման հակաակորդները ձգտում էին հետ պահել երկիրը հանրային պարարտանյութերի լայն կիրառումից:

Սակայն Դ. Ն. Պրյանիշնիկովը մոխրի, տորֆի, գոմադրի, կոմպոստների և այլն տեղական պարարտանյութերի ամենամեծ ջատագոյություն է եղել: Նա իր կրթությամբ կուլիվներում գիտականորեն ապացուցում էր տեղական պարարտանյութերի զրական հատկությունները, նրանց անկորուստ կուտակման և ամենալայն կիրառման անհրաժեշտությունը: Հսկայական նշանակություն տալով գոմադրի օգտագործմանը, Պրյանիշնիկովը դեմ էր Վիլյամսի այն կարծիքին, որ գոմադրը պետք է փոխարինվի և փտացնել, դարձնել փտահոլ և նոր հողը մտցնել: Պարզ, փորձնական ավելանքով Պրյանիշնիկովը ցույց էր տալիս, թե որքան մեծ են նյութերի և մանավանդ ազոտի կորուստը գոմադրը Վիլյամսի եղանակով պահելու դեպքում և առաջադրում էր այն եղանակները, որոնք ապահովում են գոմադրի անհամեմատ անկորուստ կուտակումը և կիրառումը:

Կարևորն այն է, որ մեծ ու օբյեկտիվ գիտնականը երբեք չէր հակադրում հանրային պարարտանյութերը՝ գոմադրին: Ընդհակառակը, նա գտնում էր, որ հանրային պարարտացումը կապիլանի գոմադրի էլը՝ դաշտերն օրգանական նյութերով ավելի առատ պարարտացնելու համար: Ահա թե ինչ էր ասում նա.

«С ростом снабжения минеральными удобрениями, с введением правильных севооборотов и увеличением площади под травами, роль навоза, как основного элемента правильной системы применения удобрений не только не снизится, но, наоборот, в значительной степени возрастет (выше урожай — больше кормов — больше навоза). Поэтому осуществление необходимых мер по упорядочению накопления, хранения и применения местных удобрений, навоза в первую очередь, представляет насущную задачу сегодняшнего дня».

Դ. Ն. Պրյանիշնիկովը տնտեսագետին հատուկ հաշվառման խորությամբ հաշվել էր, թե որքան մեծ է հանրային պարարտանյութերի ազդեցությունը գոմադրի ելի ու որակի վրա և թե ինչպես քիմիացված տնտեսության մեջ գոմադրի ամենալայն և անկորուստ օգտագործումը՝ հանրային պարարտանյութերի լրացուցիչ, երկրորդային էֆեկտիվություն է նշանակում: Ուրեմն պարզ է, որ Պրյանիշնիկովը տեղական բոլոր պարարտացուցիչ նյութերի և մանավանդ գոմադրի կիրառման համոզված կողմնակիցն էր:

Դ. Ն. Պրյանիշնիկովը և եղբի ստրուկտուրան: Ինչպես հայտնի է Վ. Ու. Վիլյամսը ոչ միայն գերադնահատում էր հողի ստրուկտուրայի նշանակությունը, ֆեոտիչացնելով և ինքնանպատակ դարձնելով այն, այլև չէր հանդուրժում որևէ այլ կարծիք այդ մասին, նակադրում էր ստրուկտուրան այնպիսի ուժեղ

լծակի, ինչպիսին է քիմիացումը. ահա նրա խոսքերն այդ մասին. անհրաժեշտ է ուղի թե Միության հոգևորի պարարտացման ուժեղացում, այլ նրանց ստրուկատուական վիճակի բերելը՝ խոտազաշտային ցանքաշրջանառությունների միջոցով» (1937. ՎԱՍՆՆԻԼ). այսինքն, թիթեռնածաղկավորների հետ բազմամյա հացազգի բույսեր ցանկում։ Վիլյամսն այնքան էր տարված ստրուկատուայի պահպանման մտքով, որ ոչ միայն դեմ էր տրակտորին, այլ նաև հողի մշակության լավ դործիքներից մեկին՝ փոցխին, իսկ բանող անասունին առաջարկում էր կրկնակողշիկներ հագցնել, որ հողի ստրուկատուային շարորեն։ Վիլյամսն ազնիվ մարդ էր, բայց սխալվում էր, որովհետև նրա գիտական կառուցումները կաթիլներով էին, նա պլուգատնետնության պրակտիկան վատ գիտեր։

Պրյանիշնիկովը գտնում էր, որ ինտրիկ, հողի մանր կենթկային ստրուկատուային շատ ցանկալի է, ինտրիկ չի կարելի վստել նրա նշանակությունը, բայց վնասակար է մեր ժողովրդական տնտեսության համար հողի ստրուկատուային ինքնանպատակ զարմելը, նրա աստվածացումը։ Պրյանիշնիկովը նշում էր, որ ոչ միայն Միջին Ասիայի ու Անդրկովկասի բամբակագործների, այլև Միության բոլոր շրջանների արտադրական փորձն անվիճելիորեն ապացուցում է, որ նույնիսկ անբարենպաստ ստրուկատուայով դաշտերում հնարավոր է ստանալ սկզբնական բերքեր՝ հանքային կամ հանքային և օրգանական պարարտանյութերի միջոցով, առանց հացազգի «ստրուկատուագոյացնող»-ների։

Մենք չենք միտում ստրուկատուային նշանակությունը, սակայն ինտենսիվ պլուգատնետնության մեջ նրա դերը երկրորդական է։ Եթե որե՛ս ցույց տանալու, մշակությանը և պարարտացմանը հնարավոր է բույսի արմատներին հասցնել օդ, ջուր և սննդանյութեր, ապա արդյունքը շատ մեծ կլինի։

Համայն էր թիվողական ազդու։ Մենք գիտենք, որ քիմիական արդյունաբերության ամենամեծ հոգան ազդողական նյութերի արտադրություն է։ Եթե նախապատերազմյան շրջանում աշխարհում արտադրվել է 2,5 մլն տոնն ազոտ, ապա 1963 թ.՝ մոտ 14 մլն տոնն։ Ազոտական նյութերի արտադրությունը բնական նշանակություն ունի ժողովրդի կարիքները բավարարելու գործում։ Գ. Ն. Պրյանիշնիկովն աներգատ պայքարելով ազոտական պարարտանյութերի արտադրությունն ավելացնելու համար միևնույն ժամանակ, իր բաղմամբով և լայնահորիզոն հաշվարկներով ապացուցում էր, որ ազոտի պահանջն այնքան ահեղի է, որ «աղտոտի պրոբլեմը» անհնար է լուծել միայն հանքային ազոտով։ Անհրաժեշտ է ամենալայն կերպով օգտագործել և քիմիական ազոտը՝ ազոտի, երկրաքիմի, կորնզանի, լյուպինի և թիթեռնածաղկավոր այլ բույսերի բարձրարդյունք մշակմամբ։ Այդ նպատակով, պնդում էր նա, կարիք կլինի պարարտացնել նաև խոտերը՝ առաջին հերթին ֆոսֆորով և կալիումով։

Պրյանիշնիկովը և հողի միկրոբիոլոգիան։ Այս բնագավառում ես եղել եմ աղաժաղումների։ Հողի միկրոբիոլոգիական ընթացքներն ունեն շատ մեծ նշանակություն՝ դրական կամ բացասական։ Հողի ճիշտ մշակության և պարարտացման դեպքում հնարավոր է որոշ չափով կարգավորել այդ ընթացքներն ի օգուտ բորձրակարգ բույսի։ Հոկտյան է պարարտականերիանների և հողում ազատ ապրող ազոտֆիքսատորների նշանակությունը։ Պրյանիշնիկովը և ազոտֆիքսիկական գիտությունը ոչ միայն հաստատում են այդ, այլ այս հարցերի հետազոտության նախաձեռնողներն են եղել։

Ազրոթիմիայի զոգմատիկ բնդդիմախոսներն այս հարցում եւ ծայրահեղությունների գիրկն էին բնկնում, ետկադրելով (համադրելու փոխարեն) միկրո-օրգանիզմների դերը՝ պարարտացման: Բոլորովին թաքմ են գիտական որեւ հիմքից զուրկ այն գիտողությունները, որ իբր բույսի սննդաուրյունը տեղի է ունենում միայն միկրոօրգանիզմների միջոցով, ինչպես պնդում է Կադ. Տ. Գ. Լիսենկոն: Դա նրա մեղրումներից մեկն է, որը վաղուց հայանի գիտական ավյալներով ժխտվում է ամենահաստատա կերպով: Այժմ հնարավոր է նույնիսկ արտադրական շափերով մեծ բերք աճեցնել թթվով ու ֆորմալինով լվացված խճի կամ ավազի վրա. և նույնիսկ այդ պայմաններում կարող են աճել տարբեր խմբերի միկրոօրգանիզմներ և այս կամ այն դերը խաղալ միջավայրում, սակայն հասկանալի է, որ դա զեռ չի նշանակում, որ միայն միկրոօրգանիզմների միջոցով է սնվում բարձր կարգի կանաչ բույսը:

Գ. Ն. Պրյանիշնիկովը և ազրոթիմիական գիտությունը միշտ հովանավորել են հույի միկրոբիոլոգիայի այն լուրջ հետազոտությունները, որոնք պարզարանում են մանրենների օգտակար խմբերի դործունեության նպաստման, իսկ անցանկալի խմբերի՝ ճնշման ուղիները:

Նա նշեցի միայն մի բանի սուր, վեճի առարկա դարձած հարցեր: Պրյանիշնիկովի անհատնում գիտությունը ուսումնասիրելու համար տարիներ են հարկավոր: Կցանկանալի նշել մի բանի բնորոշ գծեր եւ: Ռուսն ճշտագետող, փորձագետ Գ. Ն. Պրյանիշնիկովը շափազանց պահանջկատ էր և ազնիվ: Նա թափանցում էր փորձի մեջ, հասկանում նրա պայմանները, ստանում ապացուցված, հավաստի ավյալներ, կրկնում այդ փորձերը և ապա ելույթ ունենում ժողովրդի և մասնագետների առաջ: Այդ է պատճառը, որ նրա հզրակացությունները հեշտ շէ ժխտել: Նրանք խորապես մտածված են և փորձարկված բազմակողմանի, նրանք ունեն իսկական գիտական հիմք, ուստի և գործնական արժեք:

Շատ կարևոր է նշել, թեկուզ երկու խոսքով, 1895 թ. մինչև 1948 թ. Տիմիրյազևյան ակադեմիայի պրոֆեսոր Գ. Ն. Պրյանիշնիկովի մանկավարժական մեթոդները: Պրյանիշնիկովը սիրում էր աշխատել ուսանողների հետ, բայց ոչ միայն ցուցադրական մեթոդով, այլ ուսանողին լուրջ և ակտիվորեն հետազոտական աշխատանքի ակաիվ մասնակից դարձնելով: Նա գտնում էր, որ բարձրագույն զարգացում գտաւտուի հաջողությունը կապված է նրա հետազոտական աշխատանքի, իր գիտական բնագավառում բանիմաց լինելու հետ: Նրա զեվիզն էր՝ «Explorando-docemus», որ նշանակում է «Հետազոտելով՝ բացահայտում ենք»: Հետաքրքրական են ուսանողի մասին Պրյանիշնիկովի մեղրերը՝ «Հավատը զեպի ուսանողն ուղղող ազդեցություն ունի՝ ստիպելով աշխատել բեղ վրա»: «Ամեն ուսանող ինչ որ նորն է, չկրկնող և անկրկնելի»: Գ. Ն. Պրյանիշնիկովը կողմնակից էր այն սկզբունքին, որ «ուսումնականն» ու «գիտականը» չպետք է խիստ բաժանվեն: «Այդպիսի բաժանման զեղրում — ասում էր նա — գիտականն այնուամենայնիվ լուսավորում է և չեմացնում, իսկ ուսումնականն առանց գիտականի՝ միայն փայլում է»:

Պրյանիշնիկովն ազրոթիմիայի դասավանդման բնթացքում հսկայական նշանակություն էր տալիս վեգետացիոն փորձին.

«Допущение студентов в вегетационный домик, притом не для шаблонных демонстраций, а для постановки каждым своего опыта, которому начало положено в академии в 1896 г., т. е. раньше, чем в какой-либо

другой школе (Западная Европа до сих пор этого не знает), было, несомненно, одним из шагов вперед по пути доведения студента до первоисточника знания...».

Գ. Ն. Պրյանիշնիկովի հարյուրամյոր գիտական աշակերտներից շատ շատերը ակադեմիկոսներ և զոկտորներ են: Մի քանի հուշեր ես:

Պրյանիշնիկովին ես առաջին անգամ տեսել եմ 1931 թ. Լենինգրադում, օչնոհանտի երբեմն հանդիպել եմ մինչև նրա կյանքի վերջին տարին: Պրյանիշնիկովը չէր ծխում և տանել չէր կարողանում ծխած միջավայր: Գոկուշանյան հողագիտական ինստիտուտում, որտեղ ես աշխատել եմ մոտ 5 տարի, գիտական խորհրդի նիստերի զբերին, երբ պետք է Պրյանիշնիկովը դար, նախորդ հետևում էին, որ մուտքից սկսած, միջանցքներում, մինչև դիրեկտորի սենյակն ու նիստերի դահլիճը ոչ ոք չծխի: Մենք խոնարհ ու լուռ դիտում էինք նրա գալը, իսկ նիստերին, եթե բան չէին հարցնում մեզ՝ չէինք խոսում:

Ես ասպիրանտուրան ավարտել էի Լենինգրադում 1933 թ. և ստացել ավագ գիտ. աշխատողի և զոգենտի կոչում. գիտական աստիճաններ այն ժամանակ դեռ չկային: Արգեն երբ դոկտորանտուրայում էի Բեկնաժուտական աստիճանս պետք է վերահաստատվեր: Իմ ուսուցիչ պրոֆ. Կիրսանովը հավաքեց իմ մի քանի աշխատությունները և խնդրեց Գ. Ն. Պրյանիշնիկովին կարծիք տալ: Դրական կարծիքը ստացավ մեր խորհուրդը: Մի անգամ միջանցքում հանդիպեցի Պրյանիշնիկովին ու բարեկամ ուզում էի անցնել: Նա կանգնեցրեց ինձ և ասաց, որ իրեն դուր է եկել հատկապես իմ մի փոքր աշխատությունը հնալուրջ փլատակների հողանյութի պարարտացուցիչ հատկությունների մասին (Փափա-դիրի Բլուրի մասին... ազոտ... Արմավիր): «Դա շատ հետաքրքիր է» ասեց նա:

Որդու (որը պրոֆեսոր էր) զոհվելուց հետո Գ. Ն. Պրյանիշնիկովը սկսեց հաճախ հիվանդանար: 1946 թ. դեկտեմբերին, հոդադետների համաժողովին ակադ. խորհրդակցության օրերին, դիրեկտորի առանձնասենյակում մենք հետաքրքիր խոսակցություն ունեցանք: Ես զիմեցի Գ. Ն. Պրյանիշնիկովին մի հարցով, թե խորհուրդ կտար նա արդյոք ստեղծել ազդրոքիմիայի առանձին գիտական ինստիտուտ, կամ լաբորատորիա Հայկական ակադեմիայում, միտք կա՞րդյոք ունենալ առանձին ազդրոքիմիական օջախ: Նախ նա խրախուսեց այդ միտքը (և հետագայում միջնորդություն գրեց), և ապա ասաց մոտավորապես հետևյալը.

«Եստ լավ եք անում, դա անհրաժեշտ է: Այստեղ էլ պետք է ստեղծենք դիտությունների ակադեմիայի ազդրոքիմիայի ինստիտուտ, բայց ես վերջերս հիվանդանում եմ, իսկ աշխատակիցներս դրադմած են իրենց գործերով: Ինչ վերաբերում է ազդրոքիմիայի գիտական առանձին օջախին, ապա պետք է ասեմ, որ միևնույն գործիքը կարող է կիրառում գտնել տարբեր բնագավառներում: Ծրինակ, հարթաշուրթը (պլոսկոգուրցի), որ փականագործական գործիք է, անփոխարինելի է նաև էլեկտրամոնտյորի ձեռքում: Հողագիտության ինստիտուտում կա ազդրոքիմիայի սեկտոր, բայց երբ կստեղծենք ազդրոքիմիայի առանձին ինստիտուտ հավանական է, որ կարիք զգացվի ստեղծելու այնտեղ հազագիառության սեկտոր: Այստեղ արդեն հողապիտական հետազոտությունները ենթակա կլինեն ազդրոքիմիական խնդիրներին»:

Պրյանիշնիկովը օգնել է պրոֆ. Պ. Բ. Փալանթարյանին Կիրովականում կրազոտի արտադրությունը հիմնադրելու գործում: Նա մեծ բարեկամն էր հայ

անանավոր ազրոքիմիկոս, մեր բոլորի սիրելի ուսուցիչ պրոֆ. Պ. Բ. Քալանթարյանի:

Այսօր երբ ողջ Սովետական Միությունը նշում է ակադ. Պրյանիշնիկովի հարյուրամյա հոբելյանը, ես շատ կուզեի, որ նրա մասին այս դաժինձում ղեկուցում կարդար ու պատմեր իմ ուսուցիչ պրոֆ. Քալանթարյանը, իսկ ես՝ բախտ ունենայի լսել նրա գնահատականը Պրյանիշնիկովի մասին:

Պրյանիշնիկովը գիտական բանավեճերի մեջ շատ քաղաքավարի էր, սակայն խիստ պահանջկոտ ղեկի փաստերի ճշտությունը, ուղիղ, շիտակ և անհաշու: Պրյանիշնիկովն աշխարհահռչակ էր: 1958 թ. Հարվարդի համալսարանում ես պետք է լսեի պրոֆ. Թիմանի դասախոսությունը: Ամբիոնի սենյակում պրոֆեսորի առիտենտը շատ հարմար մի տեղակայքով արդեն արտատպել էր մի շարք աղյուսակներ և գծադրեր Պրյանիշնիկովի դրքից: Նրանք թարգմանում էին «Ազրոքիմիա» գիրքը մաս մաս, բազմացնում ուսողորինտով և բաժանում ուսանողներին: Դասախոսությունը հազեցած էր Պրյանիշնիկովի տվյալներով և տեսակետներով:

1964 թ. մարտին, Հոռոմի ազրոքիմիական գիտական կայանում պրոֆ. Մորանին առանց թաքցնելու իր հրճվածքն արտահայտեց և շատ ուրախացավ երբ ես տվեցի նրան մի նամականիշ Պրյանիշնիկովի նկարով: Նա ասաց. «Թեև ես բախտ չեմ ունեցել անձամբ լսելու Պրյանիշնիկովին, բայց ես համարում եմ ինձ նրա աշակերտը և խոնարհվում եմ նրա առաջ»:

Անհատական կյանքում և ընտանիքում Դմիտրիյ Նիկոլաևիչը համեստ և հմայիչ բնավորություն ուներ:

Եթե ես փորձեմ ամենաընդհանուր եղբայացություններ անել Պրյանիշնիկովի մասին, ապա կարող եմ ընդգծել, որ նրա երկար և բեղմնավոր կյանքի ու գործունեության մեջ կարմիր թելի պես անցնում են հետևյալ գծերը: Համոզված հավատ ղեկի գլխուրջան ուժը, գիտական բազմակողմանի և ամուր հիմունքների վրա պայմար՝ ժողովրդական տնտեսության անընդհատ պրոգրեսի, առաջխաղացման համար, շատ մեծ, ներքին, օրգանական հատկանիշ դարձած սեր և հարգանք ղեկի ժողովուրդն ու ժողովրդի շահերը: Ահա այդ գծերն են, որ թույլ են տվել նրան՝ մալթուսյան տեսությունը հակադրել խիստ մարդասիրական հողի բերիության բարձրացման օրենքը: